ՄԵՐԴԱՍԷՐ ՋՈՐՋ ՄԻԼԼԷՐ [1])

Աղօթքի թէլէֆոնը։

Այս վերոգրեալ մանրամասնութիւնները հետաքրքրաշարժ են ըստ բաւականին։ Բայց նոքա լոկ առաջնորդում են դէպի բուն կարևոր կէտը, դէպի այն ճանապարհը որի մէջ Ջորջ Միւլլէր իւր փորձերով ցոյց տուեց և վերլուծեց իսկական բանաւորութեան արժէքն այն աննիւթական թէլէֆոնի որ կոչւում է Հաւատքի Աղօթք։ Ամենևին տարակոյս չկայ թէ այդ Աննիւթական թէլէֆոնը բանեց ամեն օր և վաթսուն տարուայ բոլոր օրերում։ Բանեց նաև ճշտապահութեամբ և հաւատարիմ, թէպէտև ոչ թէ այնպիսի մի կանոնաւորութեամբ, որը կարողանար գոհացնել նոյն իսկ նորանց որոնք նայում էին Ջորջ Միւլլերի վրայ իբր հերետիկոսի վրայ, բայց հիանում էին նորա գործերով։

Աղօթք հարաւային Ֆամիի համար։

Զոր օրինակ վեր առնենք մի պարագայ ուր երևում է Ջորջ Միւլլերի երեխայական վստահութիւնը Աստուծոյ վերաբերմամբ.—

Սրանից քառասուն տարի առաջ, Պարոն Միւլլերի Որբանոցում ջերմացնող գործիքի գլխաւոր կաթսան շատ վատնդաւոր կերպով խանգարւում է։ Ամբողջ կազմուածքի վերանորոգութեան համար հարկաւոր է դառնում երեք օրուայ աշխատութիւն։ Հիւսիսային մի շատ կծու քամի էր փչում այդ շաբաթ։ Պարոն Միւլլեր Ս. Գրքի մէջ կարդացել էր թէ երբ Նէհէմիա չինում էր տաճարը, նա կարողացաւ վերջացնել առանց հետևեալ մարդիկը աշխատելու կամք ունենին։ Ուստի ինքն էլ աղօթեց երկու բանի համար – նախ որ հիւսիսային բուքը փոխուէր հարաւային տաք քամիի, և երկրորդ որ մշակները կամք ունենային աշխատելու։ Այն օրը որ կրակը հանգցրին գործի ձեռնարկելու համար հիւսիսից բուքը դադարեց և տաք քամի սկսեց փչել հարաւից, որով երեխաները չէին մրսում։ Երբ առաջին օրուայ իրիկունը վրայ եկաւ, բանւորները ուղեցին Միւլլերի հետ խօսել. և ասացին նորան թէ իրենք իրենց մէջ ընդհանուր համաձայնութեամբ մտածել են ամբողջ

---

[1]) Տե՛ս Լումայ № 5.

գիշերը գործել, որպէս զի շուտ վերջանայ և որքերը չմնան առանց կրակի։ Այսպէս մարդիկը կամք ունեցան աշխատելու։

Բնականաբար աստուածային մեծ Համադրութեանը պիտի վերադրել քամիի այս փոփոխումը հիւսիսից հարաւ, սակայն այն համադրութիւնները որ միշտ պատահում են կանոնաւոր յաջորդութեամբ, դէթ, մտածել են տալիս մի ինչ որ կապակցութիւնների գոյութեան մասին, որոնք տարբեր են սոսկ դիպուածներից։

Մի նախնական փորձ։

Առանց քննութեան առնելու այս վերոգրեալ օրինակը, հետամուտ լինենք տեսնելու թէ որքանոցը ինչպէս գոյութիւն առաւ և ինչպէս նա դարձաւ հաւատքով Աղօթքի զօրութեան այնպիսի հսկայական և գերազանց մի պատկերը։ Մինչև այժմ աստուածներից արդէն հասկանալի եղաւ թէ Ջորջ Միւլէր՝ դեռ ևս որքանոցի գոյութիւնից առաջ՝ սովորութիւն ունէր իւր դրամական պէտքերի համար դիմել Աստուծոյ և հաւատում էր թէ իւր աղօթքների գոհացուցիչ պատասխանը կստանար Աստուծուց։ Նա տեսաւ թէ աղօթքի վրայ լոյս դնելու արդիւնքը համեմատելով իւր դաղարած կանոնաւոր հասոյթի հետ շատ աւելի շահաւէտ էր։ Իրաքանչիւր ունեցած ռուբլիի փոխարէն որ նա զոհել էր բարի գործի համար աղօթքի միջոցաւ նա ստանում էր երկու կամ երեք ռուբլի։ Պարզապէս ֆինանսական տեսակէտից նա փող էր վաստակում, ձեռքը ջէրը դրած, իւր սեփական պէտքերի համար լոյսը դնելով Տիրոջ վրայ։ Եւ այսպէս նա շարունակեց վեց տարի։ Շատ ու շատ անգամներ է պատահել որ ծախսել է իւր վերջին կոպէկը և ոչինչ չէ ունեցել ապրելու կամ տուրք հաւաքողին հատուցանելու համար, բայց այդ ամեն անգամներին էլ փողը վրայ է հասել ճիշտ ժամանակին։ 1835-ին, զոր օրինակ, ութսուն մզոն մի տեղից ղրկուած 50 ռուբլին ստացաւ ճիշտ տուրք հաւաքողի գալուց մի քիչ առաջ։ Ջորջ Միւլէր շարունակ կարողանում էր աղօթքի մէջ խնդրած փողը ստանալ ինչ բանի համար էլ որ լինէր։ Եւ ամենևին պարտքի տակ չընկաւ։

Առաջին կոչումը։

1834-ի Հոկտեմբերի 28-ին էր երբ Միւլէր առաջին անգամ սկսեց լրջօրէն մտածել որքանոցի գաղափարի մասին։ Մի փոքրիկ որբ կար որ իւր ուշիմութեամբ ու բարքով գրաւել էր պ. Միւլէրի համակրանքը, սակայն շատ չանցած երեխան ղրկուում է աղքատանոցը՝ որովհետև «Դպրոցի հոգաբարձութեան միջոցները չէին ներում»։ Իւր լուշատետրի մէջ պ. Միւլէրը գրած ունի.—«Թող այս օրինակը, եթէ կամք Տեառն լցէ, ինձ առաջնորդ լինի որ կարողանամ մի ճար գտնել աղքատ երեխաների հոգևոր և մարմնաւոր պէտքերի համար»։

Տան երկու ամիս որքանոցի անհրաժեշտութեան մասին

անդայար խորհրդածելուց յետոյ, վերջապէս հաստատապէս որոշում է այլ ևս գործի ձեռնարկել։ Սակայն այդ հետևանքին գալուց առաջ, ըստ իւր սովորութեան, առաջին գաղափարը եղած էր «Տիրոջ կամքը հարցնել»։ Մի ամբողջ ամիս իւր օրերը «աղօթքով» անց կացնելուց վերջը հեղհեղուկ աւելի ու աւելի համոզուեցաւ թէ այդ գաղափարը Աստուծուց էր ներշնչուած իրեն։ Բայց այն սկեպտիկ ընթերցողները, որոնք անպատապար որքերի վրայ մտածում են սոսկ անօթի փորերը կշտացնելու և մերկ կռնակները ծածկելու տեսակէտից, չպէտք է երևակայեն թէ բարեմիտ Միւլէրը իւր այդ նպատակին մըղուել էր պարզապէս նիւթապաշտ փիլիսոփայութեան այս տեսակ նկատումներից։ Ջորջ Միւլէրի փափագը հիմնովին տարբեր էր հանդէպ այն կարեկցութեան և համակրութեան որ նա կարող էր զգալ երեխաների ֆիզիքական նեղութիւնների համար։ Երեխաների ապրուստի հարցը, ստուգիւ, բնաւ երբէք նորա մտածմունքի առաջին նպատակը չէր։

Ինչու նա հիմնեց որբանոցը

Իւր լուշատեարի մէջ նա անկեղծօրէն և լիովին լայտնում է թէ ինչու էր պէտք տեսնում որբանոց հաստատելու։ Նա ասում է թէ, իւր պաշտօնավարութեան մէջ, այնքան լաճախ էր պատահում երկմտութեամբ և թերահաւատութեամբ լի քրիստոնեաների, որ ինքը համոզուեցաւ թէ, մեր ներկայ օրերում Աստուծոյ որդիքը ամեն բանից աւելի պէտք ունին ամուր և զօրաւոր հաւատքի։ Նոցանից ոմանք վախենում են իրենց շահաւոր ժամանակը գործածել ս. Գիրք կարդալու կամ աղօթելու համար զի մի գուցէ իրենց անձնական զբաղումից վնաս քաշեն, ուրիշները անցնում են իրենց կեանքը զուտ մարմնաւոր վայելքների մէջ առանց նորանից բարձրը դիտելու, մինչդեռ մի երրորդ մասն էլ վախենում են ապաւինել Աստուծոյ թէ նա արդեօք հոգ կը տանի իրենց եթէ իրենք անվեհեր հնազանդեն նորա պատուիրանքներին։ Միւլէրի ցանկալի նպատակն էր «ունենալ մի այնպիսի բան, որով իբր մի տեսանելի փաստով ցոյց տամ իմ քրիստոնեայ եղբայրներին թէ մեր Աստուածն ու Հայրը միևնոյն նախկին արժանահաւատ ու արդար Աստուածն է, թէ Նա միշտ պատրաստ է ապացուցանելու որ Ինքը միևնոյն կենդանի Աստուածն է նաև մեր օրերում ինչպէս էր ժամանակաւ այն մարդոց համար որոնք ապաւինում էին Իրեն»։ Միւլէրի ուշ ու միտքը միշտ այս կէտի վրայ էր պտտում։ Նա ուզում էր մի այնպիսի ակներև նշան, այնպիսի մի չշափելի փորձ, որպիսին էր Այազ թագաւորի արևացոյցի ստուերի ետ երթալը, կամ որպիսին էր Ահարոնի գաւազանի ծաղկելը.

Իւր պատանեկութեան ժամանակ Գերմանիայում տեսել էր Ֆրանք անուն մի երկիւղած քրիստոնեայի հիմնած որբատունը, նա այժմ շատ աւելի լստակ թափանցում էր այն հո-

զեկան անհուն ուրախութեան մէջ որ Ֆրանքը զգում էր որբատան զոյութեան համար և կրթում էր որբերին Աստուծոյ ճանապարհով։ Այդ լուշատակը անդադար արծարծւում էր իւր երևակայութեան մէջ և ինքն էլ ցանկանում էր Տիրոջ օգնականութեամբ նմանօրինակ մի ձեռնարկ ի գլուխ հանել Բրիստոլում։

Որբանոցը իբր Աղօթատուն

Հարկաւոր է մասնաւորապէս շեշտել այս կէտի վրայ։ Որովհետև հանրային գաղափարն այն է թէ Միւլլէր հիմնեց այդ որբանոցը որպէս պի մի օգնութիւն արած լինի որբերին, և թէ Անտեսանելի Զօրութիւնը խորհրդաւոր եղանակաւ ըստ ամենայնի նպաստեց նորան ի վարձատրութիւն նորա ընտիր դիտաւորութեանը։ Նա աղօթքա-թէլէֆոնը չգործածեց որպէս զի հիմնէ Որբանոցը։ Նա հիմնեց որբանոցը որպէս զի ապացուցանէ Աղօթքա թէլէֆոնի օգտակարութիւնը։ Իւր լուշատետրի մէջ ասում է, իւր ցանկութիւնն էր աշխարհի և եկեղեցու առջև ներկայացնել մի աղդու փորձ թէ Աստուած ամենևին չէ փոխուել մարդկային աղդի վերաբերութեամբ, և դորա համար «ինձ ամենից աւելի լարմար թուեցաւ մի որբանոցի հիմնարկութեամբ ապացուցանելը։ Նա ասում է.

«Պէտք էր մի այնպիսի բան որ կարելի լինէր տեսնել, նոյն իսկ բնական աչքով։ Ուստի եթէ ես, այս աղքատ տեղուս, ոչ մէկ կոպէկ չունդրէի ուրիշից այլ միմիայն աղօթքով և հաւատքով յաջողէի հիմնել ու լառաջ տանել մի որբանոց, այն ժամանակ կարելի էր այդ երևոյթի մէջ նշմարել մի նշան որ ամրապնդէր Աստուծոյ որդիների հաւատքը, բացի այդ դարձի չեկածների խղճի համար դա կը լինէր իբր աստուածային գործերի ճշմարտութեան հաստատ մի ապացոյց։ Այս էր, ուրեմն, իմ առաջին նպատակը որբանոցը հաստատելու համար։ Ես արդարև ցանկանում էի որ հօրից ու մօրից զուրկ խեղճ երեխաների մարմինները խնամուին Աստուծով, և միւս կողմից էլ Աստուծոյ օգնութեամբ փափագում էի նոցանից շինել բարի մարդիկ այս կեանքի համար։ Նաև ես յատկապէս ցանկանում էի այդ սիրելի որբերին կրթել Աստուծոյ երկիւղի մէջ։ Բայց և այնուամենայնիւ իմ գործի առաջին և գլխաւոր նպատակն էր (և այժմ էլ է) ապացուցանել Աստուծոյ մեծութիւնը թէ իմ խնամքին տակ եղած որբերի ամեն պէտքերը հոգացուել ու հայթայթուել են միայն աղօթքով և հաւատքով առանց իմ կամ գործակից ընկերներիս կողմից դիմում լինելու ոևէ մէկին, որով կարելի է տեսնել թէ Աստուած դեռ ևս արժանահաւատ է և դեռ ևս լսում է աղօթքին»։

Մի դիտական փորձ։

«Որպէս զի բոլոր աշխարհ և Աստուծոյ ընդհանուր եկե-

զեցիները տեսնեն թէ տակաւին այս օրերումս Աստուած ունկնդրում է աղօթողին, և Աստուած աղօթքի և սիրոյ մէջ միշտ նոյնն է ինչպէս եղած է երբեմն» այդ էր ուրեմն Ջորջ Միւլէրի նշանաբանը որբանոց հիմնելու որոշման մէջ և ոչ ոք կարող է ժխտել այս խօսքերը ով որ հետևելու լինի նորա պատմութեանը 1836-ից սկսած մինչև 1898։ Եւ այս ուսումնասիրութիւնից կարելի է հետևացնել թէ Ջորջ Միւլէր մի փորձառական փիլիսոփայ էր։ Բրիստոնական ընկերութեան նախագահ պրոֆէսոր Թինդալ վերջերումս առաջարկեց որ մի ո և է հիւանդանոցի մէջ աղօթքը գործածել որուի իբր բուժելու միակ միջոց կարենալ փորձելու համար աղօթքի զօրութեան ազդեցանը։ Մինչդեռ Միւլէր արդէն վաթսուն տարիից աւելի էր որ փորձառական մեթոդով արդէն կատարում էր աստուածային գոյութեան և աղօթքի ներգործութեան այդ գիտական հետազօտութիւնը անուշանալով հազարաւոր որբեր։

Հրաշքներով բեռազարդուած մի վէպ

Մեծ փորձի պատմութիւնը նախաբանից մինչև վերջաբանը կարդացուում է իբր մի անընդհատ վէպ—բեռազարդուած հրաշքներով, որոնք սակայն դադարել են հրաշքներ նկատուելուց քանի որ ամեն օր են պատահում։ Եւ ըստ ժամանակակից բանապաշտ դատողութեանց —այդ վէպի և նորա հրաշքի տարրի մէջ այնքան ծաղրելի անհեթեթութիւն է խառնուել որ մարդ չէ կարողանում իւր բարձրաձայն քրքիջը զսպել։

Երբ 1835-ի վճռական դեկտեմբերին, Ջորջ Միւլէր տատանում էր որբանոցի թեր ու դէմ փորձառական քուրայի մէջ, միանդամայն ծանր երկմտութեան մէջ էր ընկել թէ արդեօք այս ձև աղօթափորձութեան ցանկութիւնը յառաջ էր գալիս Աստուծուց եթէ ոչ Սատանայից։ Մթթէ Աստուած արդէն պէտք եղածից աւելին չէր տուել իրեն անելու համար։ Այն ժամանակ նա երեսուն տարեկան էր, և արդէն հաստատած ունէր երեք ցերեկեայ դպրոցներ, մի հատ կիրակնօրեայ դպրոց. և մի հատ չափահասների դպրոց, և յառաջ էր վարում գթութեան երեք դպրոցներ, որոնք այլապէս պիտի փակուէին դրամական անձկութեան հետևանօք։ Նաև աշակցում էր արտաքին առաքելութիւններին, և Հին ու Նոր կտակարաններ էր տարածել տալիս հազարներով։ Արդ քանի որ այսքան բարի գործունեներով ծանրաբեռնուած էր, էլ ինչու էր մտածում վերստին փորձել նախախնամութեանը ձեռնարկելով այս որբանոցին իբր Աստուածային բնութեան արտաքոյ կարգի մի նոր փորձ, մանաւանդ որ հինգ տարի շարունակ ինքը բազմաթիւ փորձերով համոզուել էր։ Այս հարցը ուրեմն ողջամիտ, խելացի, գործնական մի առարկութիւն էր։ Բայց խնդրի կարևորութիւնը գերակշռեց նորան, և Միւլէր մտածեց

թէ եթէ Աստուած կամենում է այդ փորձն էլ կը կատարէ իւր միջոցաւ։

Բաղդի փորձ

Միլլէր ունէր բոլորովին իրեն լատուկ մի մեթոդ ո և է բանի ստուգութեանը համոզուելու համար։ Նա խնդրեց Աստուծուց որ իւր կամքը լայտնէ նորան Կրէլք եղբայրների միջոցաւ։ Յետոյ գնաց Կրէլք եղբայրների մօտ և տեսաւ որ նոքա ջերմապէս քաջալերում են նորա դաղափարը։ Ապա որոշեց խնդիրը ներկայացնել բարեպաշտ հասարակութեան առջև մի հաւաքական ժողովի մէջ։ Բայց իր այդ որոշումը տակաւին չդործադրած տեսաւ իւր նպատակի ճանապարհը հարթուած իւր առջև։ Եւ այդ ճանապարհը որով նա հասաւ իւր եղբայացութեան այնքան «մաղալու» է որ ամենաստուածավախ քրիստոնեայի ծիծաղը կարող է շարժել։ Միլլէր միշտ կարդում էր Ս. դիրքը։ Դեկտեմբերի 5-ին նա կարդում էր ութսուն մէկերորդ սաղմոսը։ Այդ մի դոհաբանական սաղմոս է որ մի երկիւղած Եբրայեցի շարադրել է սրանից երկու հազար տարի առաջ ի փառաբանութիւն աստուածային մեծ սիրոյն առ Իսրայէլ։ Տասներորդ տունի մէջ ասուած է.—«Ես եմ քո Տէր Աստուածը որ ազատեցի քեզ Եգիպտոսի երկրից։ Բերանդ լայն կերպով բաց արա և ես կը լցնեմ։ Պատմականօրէն, պատճառաբանօրէն, կամ ինչ մեթոդով էլ որ քննելու լինինք, պիտի տեսնենք թէ այս բանաստեղծական լանկերդը վերաբերում է Ելից գրքի այն դէպքին ուր Իսրայելացիք կերակրւում են մանանայով և լորամարդիներով։ Դրանից դուրս ուրիշ մեկնութիւն չկայ։ Մեկնաբանական ոչ մէկ դրութեան հիման վրայ, անտարակոյս կարելի չէր եզրակացնել թէ Տէր Աստուածը Իսրայէլի զաւակների հետ կապած իւր այդ խոստումով միանդամայն կարող էր պարտական մնալ լեցնելու Բրիստոլի դերմանացի միսիոնար Ջորջ Միլլէրի բերանը տասնեհիներոյդ դարում, և այն ևս մի այնպիսի պայմանաւ որ որչափ լայն կարողանայ բանալ Տէրն էլ այնչափ աւելի լցնէ։ Թէպէտ և կարող է անհաւատալի երևալ, սակայն քանի այս օրինակը և այս օրինակի մեկնութիւնն էր որ առաջնորդեցին Ջորջ Միլլէրին սկսել իւր որբանոցի դաղափարի գործադրութիւնը։

Ես բա՛ց դրերան քո լայն

Միլլէրը ասում է.—

«Այդ ամբողջ երկու շաբաթուայ ընթացքում ես ամենևին փոդ չխնդրեցի Աստուծուց և ոչ էլ մարդիկների դիմեցի որ դործին աջակցեն։ Դեկտեմբերի 5 ին, սակայն, աղօթքիս նիւթը միանդամայն տարբեր մի բան երևեցաւ ինձ։ Ես կարդում էի ՃԱ Սաղմոսը, և առաջին անդամներից աւելի, մի մասնաւոր տպաւորութիւն դդացի տասներորդ տունի ընթերցումից» բերանդ լայն բացարա և ես կը լեցնեմ։» Մի քանի վայրկեան

մտածեցի այս խօսքերի մասին և ապա ներշնչում ունեցայ այդ բառերը յայտնել Որբանոցի խնդրին։ Ինձ երևում էր թէ ես ամենեին տիրոջից բան չէի խնդրել այդ առիթով, բացի իմանալուց Նորա կամքը թէ արդեօք պէտք է հաստատել թէ ոչ, ուստի ծունկերիս վրայ ընկայ և բերանս բաց արի լայն կերպով ու սկսայ սաստկապէս խնդրել։ Ես խնդրեցի որ Նորա կամքը ուղեցոյց լինի ինձ, առանց նշանակելու մի որոշ ժամանակ թէ երբ արդեօք պիտի պատասխանէ իմ խնդրուածքին։ Ես աղօթեցի որ ինձի տայ մի տուն, զօրաբինակ ոչէ մէկը ներշնչուի իւր տունը փոխ տալ, կամ թէ մէկը դուրս գայ վարձքը վճարելու փափաք յայտնէ, կամ թէ որևէ մէկը տունը ընդ միշտ նուիրէ այդ նպատակի համար. դրանից դուրս ես խնդրեցի ճիշտ 10,000 ռուբլի, և նմանապէս խնդրեցի որ յարմար մարդիկ մէջ տեղ դան որբերի հոգատարութեան մասին մտածող։ Եւ այս ամենից յետոյ ես խնդրեցի տիրոջից որ մտնէ իւր ժողովրդի հոգու մէջ և նրանց թելադրէ որպէսզի ղրկեն ինձ տան կահկարասիներ, և զգեստեղէններ երեխաների համար։»

«Եւ ես լցից զնա»

Միւս օրը ոչինչ չեկաւ, երրորդ օրը առաջին անգամ լինելով ստացաւ լիսուն կոպէկ։ Նոյն երեկոյին մի երկրորդ լիսուն կոպէկ է աւելանում վրան։ Դեկտեմբերի 9-ին մի հանդերձանոց է գալիս։ Մի ժողովից հաւաքում է հինգ ռուբլի։ Թէև ո և է հանդանակութեան չէր ձեռնարկուած բայց մի աղջիկ ինքնաբերաբար նուիրում է այդ գործին։ Իւր նպատակը յայտնի էր դարձել ժողովրդին։ Դեկտեմբերի 10 ին մի մարդ և մի կին իրենց նուիրում են այդ գործին։ Նոքա պատրաստականութիւն են յայտնում իրենց բոլոր կահկարասիքը տալ որբանոցին, և իրենք էլ ձրիաբար աշխատել որբանոցի համար։ «Երեկոյին մի եղբայր զանազան անհատներից բերաւ երեք ափսէ, - քսանութ պնակ, երեք տաշտ, մի կուժ, չորս կճուճ, երեք աղաման, մի քերոց, չորս դանակ, և հինգ պատառաքաղ։» Այսպէս է սկսում Միւլէրի մոգական հրապուրանքի պատմութիւնը, որպիսին միայն կարելի է տեսնել արաբական «Հազար ու մի գիշերների» մէջ։

Աղօթքի կախարդութիւնը

Կախարդութիւնը շարունակում է գործել, օրէցօր աւելի աւելի սաստիկ զօրութեամբ։ Եւ տակաւին որչափ աւելի էր փող գալիս Ջորջ Միւլէրն էլ այնչափ աւելի լայն էր բաց անում իւր բերանը։ Դեկտեմբերի 12-ին մի անհատ անլուսալի կերպով նորան տուեց 500 ռուբլի։ Ուստի «ես շարունակեցի աղօթք անել որպէս զի այդ օր Տէրը դեռ մի քիչ էլ աւելի փող ղրկել տայ։» Հետևաբար նոյն երեկոյին նա ստացաւ քսան և ինն մէթրօ տպածոյ (չիթ)։ Իրարու ետևից բազմաթիւ կնիկներ եկան անձնուիրաբար ծառայելու համար որբանոցի մէջ։

Մարդուն մէկը եկաւ նորա մօտ և ասեց թէ ինքը նուիրում է 26,000 ռուբլի մի կալուած երբ Միլլէր ձեռք բերելու լինի 5000 ռուբլի։ Միլլէր Աստուծուց խնդրել էր ճիշտ 10,000 ռուբլի կանխիկ դրամ որպէս զի այնուհետև միայն ձեռնարկէ գործին։ Մի առ ժամանակ սկսեց քիչ քիչ դալ, բայց յետոյ երբ սկսեց աւելի լայն բանալ բերանը, փողերը ու նուէրները վերստին չատացան։ Մի օր ստացաւ 75 ռուբլի, մի ուրիշ օր 400 ռուբլի, և ապա բազմաթիւ զարդեղէններ, այսպէս՝ մի ոսկի գնտասեղ, 15 մարգարիտ, 2 զարդասեղ, 2 մետալիոն, 11 մանեակ, 1 ապարանջան, եւ, ամենքն էլ ոսկիից։ Վերջապէս յունիսի 15 ին նա ունէր 9950 ռուբլի։ Սակայն 10,000 ռուբլիից մի կոպէկ պակասով անգամ չէր համաձայնում գործի ձեռնարկել։ Սի ամբողջ որ նա գործածեց աղօթելու բերանը միշտ հնար եղածին չափ աւելի լայն բանալով։ Նոյն երեկոյին ճիշտ 50 ռուբլիի փող եկաւ իրեն, ոչ աւել ոչ պակաս։

Ջորջ Միլլէրի բերանը լցուեցաւ։ Վերջապէս։ 10,000 ռուբլի ալապէս գանձելուց յետոյ միայն ծունկի եկաւ և շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ։

Խոստումը ինչպէս պահուեցաւ

Ահա այսպէս նա սկսեց։ Բայց աւելի դժուարին այն է թէ ինչպէս զարգացաւ ու բարգաւաճեցաւ մինչև որ կարողացաւ իւր յարկին տակ պահպանել 2000 որբեր և տարեկան 200,000 ռուբլիից աւելի ծախք անել։ Այդ հարցի լուծումը պէտք է փնտռել Միլլէրի ջերմեռանդ աղօթքների մէջ։—

Չնայելով որ յաճախ մնում էինք առանց փողի, լիրաւի առանց փողի մինչև այն աստիճան որ հինգ կոպէկ իսկ չէր մնում ինձ մօտ, կամ սեղանի վրայ գտնուած հացից դուրս ուրիշ հաց առնելու կարողութիւն չէինք ունենում, այնուամենայնիւ քնաւ անօթի չմնացինք, և Տէրը մեր սնունդը մատակարարեց ճիշտ յարմար ժամանակին։ Ես պարտաւորուած եմ յայտարարելու այս բանը և ես ուրախութեամբ եմ անում այն յայտարարութիւնը։ Իմ Տէրը շատ բարի գտնուեցաւ դէպի ինձ»։

Հաւատքի աղօթքը եթէ ոչ թէլէպաթի։

Ցիսուն նուիրատուներից քառասունն և ինը անձամբ անծանօթ են եղել պ. Միլլէրին. նուիրատուներից և ոչ մէկին անձամբ դիմում չէ եղել և ոչ իսկ մէկ կոպէկի համար։ Կէս կոպէկ իսկ ծախք չէ եղել յայտարարութիւնների համար։ Հանգանակութեան միջոցներ էլ ամենևին չեն ձեռք առնուել։ Նուիրատուների անունները հրատարակութեան չեն յանձնուել որպէս զի ուրիշների անապահութիւնն էլ գրգռուի նպաստ դրկելով։ Այլ միմիայն ամենայն ջերմեռանդութեամբ և հաւատքով։ Ուրեմն հաւատքի թէլէֆոնն էր միայն որ անդադար բանելով սնունդ էր մատակարարում Բրիստոլի որբանոցներին։

Նս. տեսանք թէ այդ աղօթքա-թէլէֆոնը, արդարև, ինչ ահագին արդիւնք է տուել, Պ. Միւլէր ձայն էր տալիս «կենդրոնականին» և կենդրոնականը կապակցում էր նորան աշխարհիս ամեն մասերի անձանց մի զարմանալի բազմութեան հետ որոնք ինքնաբերաբար տալիս էին ու տալիս։ Շատ հազուադէպ էր որ Միւլէր կենդրոնականից խնդրէր որ իրան հետ կապի այս կամ այն անձը. ամենևին անձ չէր որոշում իւր աղօթքի մէջ։ Մէկ անգամ, սակայն, երբ 1000 ռուբլիի մի շատ ստիպական պէտք ունէր, պատահաբար աղօթեց որ այս ինչ մասնաւոր մարդի սրտի մէջ փափաք յառաջանայ ու բերէ 1000 ռուբլի տայ իրեն։ Աղօթքը անելուց յետոյ այլ ես յատկապէս չմտածեց այդ կէտի մասին։ Բայց եկ տես որ իւր մտադրած մարդից հետևեալ օրը 1000 ռուբլիի մի չէք ընդունեց։ Այս, տարակոյս չկայ թէ այս երևոյթին կարելի է անուանել Աղօթքի Թէլէֆոն, կամ Թէլէպաթի։

Կենդրոնակա՞նը

Բայց ով էր կառավարում արդեօք թէլէպաթիք մտակոչակները, քանի որ պ. Միւլէրը նրանց չէր տալիս ոչ մի որոշեալ ուղղութիւն, այնուամենայնիւ նրանք փոխանցւում էին ուղղակի այնպիսի անձերի մէջ որոնք օգնութիւն տալու կարողութիւն էին ունենում։ Մանաւանդ թէ ամեն պարագաներում էր փող ղրկողները իրենց ներփակ նամակներով գրում էին թէ «Աստուած իրենց թելադրեց որ ղրկեն»։ Այս եղանակով է ձեռք բերել նաև այն հողը որի վրայ կառուցուած են որբերի տունը, թէ և ոչ իբր նուէր սակայն մեծ զեղջով։ Պ. Միւլէր երկու անգամ վաճառողից խնդրում է ծախել իւր առաջարկած գնով, այդ երկու անգամին էր մերժւում է։—

Պ. Միւլէր այն ժամանակ ինքն իրեն մտածում է թէ երևի Աստուած մի ինչ որ դիտաւորութիւն ունի այդ խնդրի մասին, և որոշում է այդ օրը չերթալ այն պարոնի մօտ որպէս զի Աստուած իւր դիտաւորութիւնը տնօրինէ։ Հետևեալ առաւօտ պատահեցաւ երիտասարդ հողատէրին, որը առանց դեռ բարև տալու յայտնեց թէ նորան այցելութեան էր գալիս, որովհետև նախընթաց գիշերը չկարողացաւ քնանալ, — և մինչդեռ այսպէս՝ անքուն անկողնում պառկած էի Աստուած ասաց նորան որ հողը ծախէ պ. Միւլէրին նորա խնդրած գնի համեմատ այսինքն իւրաքանչիւր ակրոնը (չորս արտավար) 1200 ռուբլիի այլ ոչ թէ 2000 ռուբլիի ինչպէս որ ինքն էր ուզում։ Տասն վայրկեանի մէջ վաճառման պայմանագիրը կնքւում է որով այդ գործից պ. Միւլէր շահում է 5600 ռուբլի։

Վերջապէս նպաստը միշտ գալիս էր

Իւր առաջին և վերջին անգամ ի լոյս հանած պատմութեան մէջ, պ. Միւլէր միանգամ ընդ միշտ պնդում է թէ Որբանոցի հաստատման շարժառիթը և նպատակն էր ցոյց տալ թէ կենդանի Աստուածը տակաւին նոյն կենդանի Աստուածն է

ինչ որ Մարգարէների օրերում սրանից երեք հազար տարի առաջ, ինչ որ էր Առաքեալների օրերում սրանից հազար ութ հարիւր և վաթսուն տարի առաջ։—

«Երբ փողի պէտք ենք զգում յառաջ վարելու համար հաստատութեան այլ և այլ ճիւղերը մենք չենք խնդրում նախկին նուիրատուներին որ օգնեն մեզ, չենք ղրկում մասնաւոր հրաւերագիրներ կամ աղերսներ որ օգնութեան հասնեն անտէր որբերին, չենք դիմում հանգանակութեան, այլ միայն աղօթք ենք անում, և համբերութեամբ սպասում ենք որ Աստուածային օգնութեան ժամը վրայ գայ. և նա անխափան օգնութիւն է հասցնում մեզ, թէև այս վաթսուն երեք տարուայ ընթացքում, շատ ու շատ անգամներ մեր համբերութիւնն ու հաւատքը մեծամեծ փորձութիւնների էին ենթարկւում նախքան օգնութեան գալը։ Բայց վերջ ի վերջոյ այդ օգնութիւնը միշտ գալիս էր պատեհ րոպէում։»

Դարձեալ նա գրել է, վաթսուն եօթն տարուայ փորձառութիւնից յետոյ.—

«Ինչ բանի որ ես ինքս կամ ընտանիքս պէտք ենք ունեցել ես ընդունել եմ Աստուծուց իմ կատարած աղօթքիս համապատասխան, և աշխարհի վրայ ապրող մարդիկներից և ոչ մէկին էլ դիմում չեմ արել ոև է բանի համար, և մինչև անգամ իմ նիւթական անձկութեան մասին ամենեին իմաց չեմ տուել ոչ մէկ անձի.. երբ ես քարոզչական փափաքով շրջում էի աշխարհիս այլ և այլ մասերում եղող քառասուն երկու երկրների մէջ, ես յաճախ պարտաւորուած էի 1000 ռուբլի, 1400 ռուբլի, այո, նոյն իսկ 2400 ռուբլի երթեւեկի ճանապարհածախս վճարել եմ և տիկին Միւլէրի համար, բայց և շարունակ յաջողում էի առանց ոչ ոքից օգնութիւն խնդրելու։

Ճիշտ Թէլէֆոնի նման

Այսքան բազմաթիւ են այս մարդի աղօթքի ազդեցութեամբ տեղի ունեցած մանրադէպերի թիւը, որ նրանցից իսկապէս կարելի է կազմել հրաշքների մի պատմութիւն, եթէ ոչ աւելի գոնէ նոյնչափ հրաշալի որչափ որ հրաշալի է «վարք սրբոցը»։ Բայց տեսնում ենք թէ շատ անգամ Միւլէրի թէլէֆոնի պատասխանները ուշանում էին մինչ այն աստիճան որ սիրտը հատնում էր և համբերութիւնն ու հաւատքը փորձութիւնների էին ենթարկւում։ Մարդկային ձեռագործ թէլէֆոնն ևս շատ անգամ միևնոյն սիրտ հատնողներն ու փորձութիւնները պատճառում է գործածողներին, բայց ի վերջոյ բանում է ինչպէս որ Ջորջ Միւլէրի հաւատքի աղօթքը սկսում էր բանել վերջ ի վերջոյ։

Ուշադրութեան արժանի է դրամական նուէրների գալու եղանակը.—այդ փողերը ղրկւում էին՝ իբր շնորհակալեաց ընծայ,

իբր քաւութեան նուէր, իբր պարգև, կամ իբր հրիտակ։ Պ. Միւլէր ամենեին չէր ուզում ապահովագրել տալ որքանոցի չէնքերն ու սեփականութիւնը, և նոքա որ հետևելով Միւլէրի օրինակին չէին ապահովագրել տալիս իրենց սեփականութիւնները, այլ ուղղակի լանձնում էին Տիրոջ ապահովութեանը այնպիսիք ապահովագրական ընկերութիւններին տալիք դրամը նուիրում էին Միւլէրի որքանոցին։ Բաց ասած եղած են նաև մարդիկ որ իրենց՝ կեանքի ապահովագրութեան դրամը ղրկել են որքերի պատապարանին։ այսպէս մէկը գրում է «ուղարկում եմ ձեզ 24 ռուբլի ի փոխարէն կեանքիս ապահովագրութեան արկածների դէմ։» Ջորջ Միւլէրի պատմութեան այս դէպքերը կարդալիս երբեմն երբեմն մարդ դժուարանում է իւր ծիծաղը զսպելու։ Ջորջինակ մի բարի մարդ ուղարկում է տասը ռուբլի հետևեալ բացատրութեամբ.—«մեր երկնաւոր Հայրը տուել է մեզ երեսուն չորս հատ հաւ, և նրանցից ոչ մէկն էլ չէ լափշտակուել աղուէսից, մինչդեռ մեր հարևանների շատ հաւերը շարունակ լափշտակւում են։»

Շնորհակալութեան ընծաները

Բրիստոլի մի խմբագիր լառաջ է բերել նուիրատուների շատերի շարժառիթները. այսպէս պահանջը զանձած լինելուն համար. կրակից ազատուելուն համար.—առողջութեան համար.—հունձքի լաջողութեան համար.—քնանալ կարենալու համար.—վերնադուռից անվնաս գետին ընկնելու համար.—Քանադալի մութ մարգագետիններից մէկի մէջից անկորուստ փրկուելուն համար.—ձիուց վայր ընկնելով միայն ծանրապէս վիրաւորուելուն այլ չմեռնելուն համար.—Երկու կովերի առողջութեան համար, որոնք հիւանդ էին և ապրելու յոյս չկար.—(մի կնկանից) Ամուսինը ծնունդի օրը դարեջուր չխմելուն համար.- գնած ձին լաւ ձի դուրս գալու համար.—«իմ ձախ թևը կոտրուելուն համար, և ոչ թէ աջ թևս կամ շլինքս և կամ գլուխս».—«մէկ գնահատելի ծառալի ու մէկ խողի մազապուր ազատուելուն համար մի կատաղի ցուլից».—«իմ սիրելի աղջիկը երեսի սաստիկ ցաւից ազատուելուն» համար.—Մի սիրտ վառնգաւոր մատի առողջանալուն համար.—Հարիւր ռուբլիանոց մի չէքի ոչ-կեղծ դուրս գալուն համար որովհետև ինքը կեղծ էր կարծում.—«Ամենասիրելի խորթ մօրս» համար.—չարիքից պահպանուելուն համար, որովհետև նուիրատուն բաղնէտունից դուրս գալուց հինգ վայրկեան վերջը ձեղուն փլչում է։

Ահա այս և համանման շարժառիթներով են ղրկուած բոլոր նուէրները որոնցից գոյացել է տասն և հինգ միլիոնի անգին դումարը։ Եւ այս բաները չեն տեղի ունենում Հաւատքի դարերում։ Նոքա տեղի են ունենում ճիշտ մեր օրերում, տասն ե ինն Դարեյրջանի վերջին տասնեակում, այս նիւթապաշտ և սկէպտիկ սերունդի միջում։

Եւ արդ, ընթերցող, ինչ էք հասկանում այս ամեն բաներից։ Ջորջ Միւլէրը արդեօք հաստատեց իւր վիթխարի վարկածների ստուգութիւնը, թէ ոչ։ Անշուշտ հնարաւոր է քննադատել այն հետևութիւնները որ կարող են մակարերուել այս փորձից։ Սակայն բուն իսկ փորձի արդիւնքի մասին ո և է տարակոյս չէ կարող լինել։

Ջորջ Միւլէրի գլխաւոր դիտաւորութիւնն էր ապացուցանել թէ հին թէլէֆօնը-որ ծանօթ է հաւատքի աղօթքը անուանում-մի կենդանի իրականութիւն էր, մի գործնական և ամենալարմար մէթոդն էր իւր նպատակին հասնելու համար։ Արդարև նա ապացուցեց։

Շատ հաւատացեալ մարդիկ այս ամեն հրաշալի յաջողութիւնները վերագրում են միայն այն կէտին թէ նա յատկապէս հաւատին նուիրուած մի մարդ էր նրա համար էր յաջողում. սակայն Ջորջ Միւլէր ժխտում է այս տեսակ կարծիքները։ Վերագրել նորան ոևէ մասնաւոր յատկութիւն իբրև բացատրութիւն նորա խնդրուածքների յաջողութեանը—այդ նա համարում է սխալ և անտեղի։ Այլ նա դրանով ուզեց ապացուցանել ամէն խոնարհ ու հաւատացեալ հոգիներին թէ նոքա ևս, իւր նման, Աստուածային գանձարանից կարող են ստանալ այն ամեն բաները որոնց պէտք են ունենում։ Բայց Ջորջ Միւլէրի նման յաջողելու համար հարկաւոր է կապակցութեան մէջ լինիք, և ունենաք ձեր մարտկոցները, ունենաք այն էլեքտրականութիւնը որ լքցուած է հաւատքով։ Այս թէ ոչ, դուք կարող էք փոխանցման պաշտօնատան բաժանորդ դառնալ, բայց թէլէֆօնը չը պիտի բանի։

The Review of Reviews-ից

Թարգ. Պ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆՑ

Լոնդոն։